ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Արտահերթ 2

01 հուլիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 29 անդամներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը:
Ավագանու նիստին մասնակցում էին՝
ԶԼՄ ներկայացուցիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և Գյումրի քաղաքի ավագանու կանոնակարգի 105-րդ, 106-րդ կետերի՝ ավագանու ընդհանուր թվի մեկ երրորդի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախաձեռնությամբ գումարվել է ավագանու արտահերթ նիստ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով:

Վարդան Ղուկասյանը հայտարարեց, որ նախագծում ներկայացված թվով 24 գործերից կան գործեր, որոնք անմիջական կապ ունեն իր շահերի հետ, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1-ին հոդվածով, ավագանու կանոնակարգի 30-րդ կետի 8-րդ ենթակետով, որպես ավագանու անդամ, անձամբ ինքը, Ավետիս Առաքելյանը և Գևորգ Ղուկասյանը չեն մասնակցելու այս նախագծի քվեարկությանը, սակայն որպես նիստը վարող՝ շարունակելու է իր գործառույթները:

ԼՍԵՑԻՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՝ Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հարակից զեկուցող՝ Իրինա Հակոբյան)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական գործընթացն ապահովելու անհրաժեշտությունը և փաստաբանական ծառայությունների մատուցման գնման թիվ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-24/24» պայմանագիրը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ, 22-րդ, 24-րդ

հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 16-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Լիազորում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Իրինա Լևոնի Հակոբյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 831, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Շինարարների փողոց, 10/1 շենք, բնակարան 61, նույնականացման քարտ՝ 013299508, տրված՝ 2022թվականի հոկտեմբերի 21-ին 001 կողմից) լինել Գյումրի համայքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումները դատական կարգով վիճարկելու՝ պետական /համայնքային/ շահերի պաշտպանության հայցեր ներկայացնելու նպատակով, **հանդես գալ բոլոր այն իրավունքներով, որը** տրված է հայցվորին, **օժտելով նրան,** ստորագրել հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքի պատասխաններ, ներկայացնել միջնորդություններ, ինչպես նաև Գյումրի համայնքի ավագանու շահերի պաշտպանության նպատակով կատարել բոլոր այն անհրաժեշտ գործողությունները, որոնք առնչվում են սույն հանձնարարության հետ, անհրաժեշտության դեպքում հանդես գալ նաև համապատասխան պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, կատարել հարցումներ և ստանալ սույն հանձնարարությանն առնչվող անհրաժեշտ տեղեկություններ:

Նշված լիազորությունները տրվում են երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումը որպես փաստաբանի լիազորությունները հաստատող փաստաթուղթ տպագրվում է 24 բնօրինակից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման վարչական գործերով դատարանին տրամադրելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քնարիկ Հարությունյանի զեկույցից հետո Վ.Ղուկասյանը թվարկեց մի շարք գործեր, որոնք, ըստ նրա, նույնպես պետք է նախապատրաստել և ներկայացնել դատախազություն՝ ընթացք տալու համար՝ մասնավորապես.

«Երկաթգծի» կայարանի հիվանդանոցի շենքի, «Վեոլիա- ջուր» կազմակերպությանը կառավարության կողմից տրված բաժնեմասի, նախկին Մանկավարժական ինստիտուտի, «Թումո»-ի և «Ցայգ»-ի շենքերի, Մարզադաշտի վարձակալության, Լոզանի համալսարանին տրամադրված նախկին վիրաբուժական հիվանդանոցի շենքի, արևային ֆոտովոլտային կայանների, Անի թաղամասի կրպակների, Գյումրու քաղաքապետարանի դեմ ուղղված բողոք-հայցերի, որոնց հետևանքով համայնքի ուսերին ֆինանսական բեռ է գոյացել, թվով 24 դատական գործերի ցանկից «Շիրակ» հյուրանոցի հետնամասում գտնվող բնակարանների, ԴԱՀԿ վարույթում գտնվող և չբռնագանձված 180 միլիոն դրամի գործերը:

Համայնքի ղեկավարը հավաստեց, որ հետևողական կլինեն վերը նշված գործերին համապատասխան ընթացք տալու հարցին:

Հիմնական զեկույցից և նիստը վարողի ելույթից հետո Գյումրի համայնքի ավագանու անդամ Կարեն Սիմոնյանը հայտարարեց, որ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի նկատմամբ սկսվել է քաղաքական և ապօրինի հետապնդում և «Մայր Հայաստան» խմբակցությունը, բոյկոտելով նիստը, իր բողոքի ձայնն է բարձրացնում:

Հարակից զեկուցման համար հրավիրվեց փաստաբան Իրինա Հակոբյանը, զեկույցից հետո նա պատասխանեց հարցերին, ինչից հետո նիստը վարողը հարցը դրեց քվեարկության:

Կողմ -22	Դեմ -0	Ձեռնպահ -2
Լ. ԱՆԱՆՅԱՆ		Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ		Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ		
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ		
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ		
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ		
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ		
Լ.Գ. ԱՆԱՆՅԱՆ		
Շ. ԱՐԱՄՅԱՆ		
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ		
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ		
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ		
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ		
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ		
Վ. ԴԱՎԹՅԱՆ		
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ		
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ		
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ		

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ա)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Լ.Գ. ԱՆԱՆՅԱՆ

Շ. ԱՐԱՄՅԱՆ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ

Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի
2025թ. հուլիսի 01